Հաստատում եմ
Ռ. Հովհաննիսյան
5.09.23թ.

Նախագծային աշխատանք

Նախագծի ղեկավար՝ Յ. Խալաֆյան (7ժամ)

Թեմա՝ «Человек и природа»	
Նախագծի անվանում՝	*Братья наши меньшие*
Առարկա(ներ)՝	Ռուսաց լեզու
Ուսումնական տարի, կիսամյակ՝	2023-2024 ուս. տարի, կիսամյակ II
Դասարան՝	VII
Տևողություն՝	01.03.2024 – 03.05.2024
Նախագծի իրականացման փուլեր	1.Թեմայի տրոհում ենթաթեմաների 2.Նախաձեռնող խմբերի ձևավորում 3.Տեղեկատվության հավաքագրում 4.Տեղեկատվության քննարկում, մշակում 5.Թեմայի վերաբերյալ եզրահանգումների ձևակերպում 6.Հետազոտական հաշվետվության նախապատրաստում 7.Նախագծի պաշտպանություն (պրեզենտացիա)
Վերջնաժամկետ՝	03.05.2024
Տեսակը՝	մոնոառարկայական
Ձևաչափը՝	☒ տեսական ☐ գործնական ☒ անհատական ☒ թիմային ☐ ընթացիկ ☒ ամփոփիչ

Նախագծի նպատակը՝

Զարգացնել աշակերտների բառապաշարը, ուսումնասիրել կենդանիների մասին տեղեկությունները, առանձնացնել և համակարգել կարևոր նյութերը: Սովորացնել աշակերտներին տրամաբանված և գրագետ ձևով արտահայտել իրենց մտքերը և կարծիքը: Նպատակն է նաև խորհապես ուսումնասիրել կենդանիների այն խնդիրները, որոնք առկա են Արմավիրի մարզի կենդանաբանական այգում, մշակել և իրականացնել այնպիսի գործողություններ, որոնք ուղղված են այդ խնդիրների լուծմանը և կենդանաբանական այգու կենդանիների առողջ և անվտանգ կենսագործունեությանը:

Նախագծի վերջնարդյունքը՝

Արդյունքում երեխաների մոտ կզարգանա բառապաշարը: Աշակերտները կսովորեն ազատ և գրագետ արտահայտել իրենց մտքերը և կարծիքը օտար լեզվով: Կձևավորվի հոգատար վերաբերմունք կենդանիների նկատմամբ: Աշակերտները կզարգացնեն իրենց գիտելիքները և հմտությունները ՏՀՏ ոլորտում: Նրանք փոքրիկ ներդրում կունենան համընդհանուր լուրջ խնդրի լուծման հարցում:

Նախագծի նկարագիրը

Աշակերտները կհավաքեն տեղեկություններ կենդանիների մասին, կմշակեն և կհամակարգեն նյութը: Կնկարահանեն տեսահոլովակ, որտեղ կպատմեն Արմավիրի մարզի կենդանաբանական այգու կենդանիների մասին, կբարցրաձայնեն նրանց խնդիրները, կոչով կներկայանան համայնքին՝ ուշադրությունը կենտրոնացնելու առկա խնդիրներին:

Կարողունակություններ, որոնք կզարգանան այս նախագծի ընթացքում

☒ Սովորել սովորելու կարողունակություն

☒ Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն

☒ Լեզվական գրագիտություն և կարողունակություն

☒ Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն

☒ Թվային և մեդիա կարողունակություն

Հետազոտության հիմնախնդիրը (մարտահրավերային հարցը)

Բնակչության մոտ ձևավորել հոգատար վերաբերմունք շրջակա միջավայրի և կենդանիների նկատմամբ:

Հիմնական հարցեր

1. **Ի՞նչ գործառույթ է իրականացնում կենդանաբանական այգին կենդանիների համար:**
2. **Ի՞նչ է անհրաժեշտ կենդանիների անվտանգ և առողջ կենսագործունեության համար:**
3. **Ի՞նչ միջոցներով բանկչությունը կարող է ներդրում ունենալ այդ խնդիրների լուծման հարցում:**